Ազգի ազգի ձայնիւ գոչեն.
Եւ աղ(ա)ղակ ու ճիչ բառնան,
Երեից ի պէս փափաղանօք.
Թէ հանա մեր ծնողքն եկան:

Ըստ իւրաքանչիւր ձայն գոչեն.
Կանչեն ճընչեն եւ մոմռան,
Ք(ա)ն զթանձրամած ամպո գոռան.
Որ կայծակախ(առ)ն որոտան:

Հանց կափկափէն զչար ատամունքն.
Ազգի ազգի բերան բանան,
Ո(ր)պ(էս) որոտ գարնանային.
Ք(ա)ն զկարկտի ջախիւն գան:

Զինչ ոչխարի ժ(ո)ղ(ո)վք լինի.
Որ գառն ըզմ(ա)յրն ճանչնան,
Հանց ճանչեն զիւր(եան)ց ծնօղքն.
Որ ի յերկրի մեղօք ծընան:

ԹՈՐՈՍ յիշէ զօրն ահագին.
Երբ ժ(ո)ղ(ո)վին ի դատաստան,
Ի յայնմ ահեղ հրապարակին.
Ուր է լեղու եւ պ(ա)տ(ա)սխ(ա)ն: (*)

* * *

Դ.

Պատմու(թ)ի(ւն) Երկոտասան Հողմոց ասաց(եալ) ի Թորոսէ

Ի յետ ստեղծմանն ար(ա)րածոց.
Որ ՀՈՅԵԱՑՈՅՑ զայս ամենայն,
Օդոց ետուր իշխանութի(ւ)ն.
Հողմունք ամեն արար սահման:

Զորս առաքեաց ի հ(րե)շ(տա)կ(ա)ց.
Զամմէկ պարգեւ ետ մի կողման,
Զն(ո)ս(ա) սկսեալ բազկատարած.
Կան հաստատեալ ի կանկըման:

(*) Անդ էջ 41բ—48ա.: